ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2020թ. № 119

«ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 17-րդ կետով, 18-րդ կետի «գ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետով և 32-րդ կետի 2-րդ պարբերությամբ, հաշվի առնելով, որ «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Շիրակի խճուղի, թիվ 148 հասցեում գտնվող 06-006-0201-0014, 06-006-0201-0012 կադաստրային ծածկագրով 0,015, 4,9335 հեկտար մակերեսով բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության բնակելի կառուցապատման, պահեստարանների գործառնական նշանակության հողամասի վրա 2017 թվականին ինքնակամ կառուցված 191,92 քառակուսի մետր մակերեսով պահեստի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10072017-06-0041 և 05062017-06-0027 վկայականները, «Գոռտեխպրոյեկտ»

ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Գևորգյանի գրությունը՝ ***որոշում եմ.***

1. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Շիրակի խճուղի, թիվ 148 հասցեում գտնվող 06-006-0201-0014, 06-006-0201-0012 կադաստրային ծածկագրով 0,015, 4,9335 հեկտար մակերեսով բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության բնակելի կառուցապատման, պահեստարանների գործառնական նշանակության հողամասի վրա 2017 թվականին ինքնակամ կառուցված 191,92 քառակուսի մետր մակերեսով պահեստը ճանաչել օրինական:

2. Միավորել «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Շիրակի խճուղի, թիվ 148 հասցեում գտնվող 06-006-0201-0014, 06-006-0201-0012 կադաստրային ծածկագրով 0,015, 4,9335 հեկտար մակերեսով բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության բնակելի կառուցապատման, պահեստարանների գործառնական նշանակության հողամասը և Շիրակի խճուղի, թիվ 144 հասցեում գտնվող 06-006-0201-0002 կադաստրային ծածկագրով 19,2241 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողամասը՝ համաձայն հատակագծի:

3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետով միավորված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը և տրամադրել «քաղաք Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 144» հասցեն:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին.

1) համայնքի բյուջե վճարել 278 640 (երկու հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ օրինականացման վճար,

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. ապրիլի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» 04 2020թ. № 118

ՀԱՄԼԵՏ ՌԱՖԻԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի «գ» ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշման, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2020 թվականի մարտի 23-ի թիվ 23032020-06-0031 վկայականը և Համլետ Ռաֆիկի Շահբազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «քաղաք Սպիտակ, Խնկոյան փողոց, թիվ 135» հասցեում գտնվող 06-006-0490-0111 կադաստրային ծածկագրով 0,01346 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքով՝ 71 069 ՀՀ դրամ, օրինական ճանաչված 6,5 քառակուսի մետր մակերեսով պարիսպը 11 180 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Համլետ Ռաֆիկի Շահբազյանին (ծնված 10.01.1947թ.):

2. Համլետ Ռաֆիկի Շահբազյանին հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 30
ք.Սպիտակ